ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/165

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Սասունասար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով գնանշման հարցում, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10336-2020 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 06.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17071-20 գրության հիման վրա, 10.07.2020թ.-ին «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.07.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 10.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/165 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

21.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 06.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17071-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 7-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հունիսի 22-

ին առաջարկվել է ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և վերջինիս հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, կից ներկայացնում եմ ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները, վերջինիս հայտը, https://armeps.am/ համակարգի միջոցով ուղարկված շտկման մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ուղարկված շտկման մասին ծանուցումը, մասնակցի կողմից ներկայացված շտկումը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը, դրա տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը:

Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սասունասար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.07.2020թ.-ի գրությամբ դիմել է «Սասունասար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10336-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորուշում, հայտնելով հետևյալը.

««ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն /տես՝ արձանագրության 7.9 կետ/:

Նույն արձանագրության 8.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետը՝ կասցենել գնահատման գործընթացը և առաջարկել մի շարք մասնակիցներին, այդ թվում «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. ժամը 15:00 տեղի ունեցած նիստի թիվ 9.3 կետի համաձայն՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ամբողջությամբ չի շտկել ...:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2020/165 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 24.06.2020թ. (24.06.2020թ. ժամը 15:00 տեղի ունեցած նիստի արձանագրության 9.3 կետ)՝ հիմքում դնելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ամբողջությամբ չշտկելու հանգամանքը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը նույն 24.06.2020թ. արձանագրելով, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատաս-խանությունները ամբողջությամբ չեն շտկվել՝ նույն 24.06.2020թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 10.1 կետով «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին թիվ 1 չափաբաժանի մասով չի ծանուցել գների նվազեցման բանակցությունների մասին, քանի որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը արդեն անբավարար էր գնահատվել:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 24.06.2020թ.–ին /տես՝ 24.06.2020թ. ժամը 15:00 արձանագրությունը/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 06.07.2020թ., հիմքում դնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին 22.06.2020թ. առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և վերջինիս հայտը 1-ին չաձաբաժնի մասով մերժվել է:

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 24.06.2020թ.–ին և միայն 8 օր անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր, մասնավորապես՝ ՍՑ-ԼՕ-2019/233, ՍՑ-ԼՕ-2020/57, ՍՑ-ԼՕ-2020/58, ՍՑ-ԼՕ-2020/59, ՍՑ-ԼՕ-2020/60, ՍՑ-ԼՕ-2020/61, ՍՑ-ԼՕ-2020/100:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սասունասար» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Սասունասար» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- 1-ին չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշվում 1-ին բաժնի կառուցողական աշխատանքների 9-րդ տողում սխալ է նշված եղել պահանջվող ծավալը, 2-րդ բաժնի քանդման աշխատաքնների 1-ին տողում սխալ է նշված եղել պահանջվող ծավալը, աշխատանքների անվանումները թերի են, բաժինների մի շարք առանձին աշխատանքների համար ներկայացված առավելագույն կշիռները սխալ են հաշվարկված, շեղումը գերազանցել է հրավերով սահմանված թույլատրելի շեմերը, դրանք լրացված չեն: Առաջին չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշվում 2-րդ բաժնի Սանիտարական սարքերի 6-րդ տողը բացակայել է և ամբողջական ծավալաթերթ-նախահաշիվը սխալ է եղել ներկայացված.
- 2-րդ չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշվում 1-ին բաժնի՝ քանդման աշխատանքների 3-րդ տողում սխալ է նշված եղել պահանջվող ծավալը, 2-րդ բաժնի՝ քանդման աշխատաքնների 10-րդ տողում աշխատանքի անվանումը թերի է նշված եղել, 2-րդ բաժնի՝ սառը ջրամատակարարման համակարգի 7-րդ տողում թերի է նշվել աշխատանքի անվանումը ինչպես նաև բաժինների առանձին աշխատանքների կշիռները լրացված չեն եղել.
- 4-րդ չափաբաժնի աշխատանքների անվանումները թերի են լրացվել, բաժինների մի շարք առանձին աշխատանքների համար ներկայացված առավելագույն կշիռները սխալ են եղել հաշվարկված, շեղումը գերազանցել է հրավերով սահմանված թույլատրելի շեմերը, դրանք լրացված չեն եղել: 2-րդ բաժնի «Ընդամենը» տողի գումարը սխալ է հաշվարկվել: «Ընդամենը» բաժինների տոկոսներով հանրագումարը անցնում է 100%-ը: Ամբողջական ծավալաթերթ-նախահաշիվը սխալ է ներկայացվել.

- 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների ծավալաթերթ-նախահաշիվներում չպետք էր նշել ծավալների հանրագումարները՝ ըստ աշխատանքների:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. 24.06.2020թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. 29.06.2020թ.-ին Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել Մասնակցի հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

viii. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17071-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10336-2020 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

24.06.2020թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

29.06.2020թ.-ին Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 24.06.2020թ.-ին՝ Մասնակցի հայտի հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով, սակայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել

06.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17071-20 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10336-2020 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/165 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ